

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	<p>Բաճկոն և տաբատ` ամենօրյա, շտաբային Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից, վրան անմիջապես կարված մեկական տարբերանշաններից և լրակազմում ներառված, բայց համազգեստի վրա չկարված, ասեղնագործ 1 հատ թևքանշանից և 1 հատ գրվածքից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի ոչ պակաս քան 235 գրամ մակերեսային խտությամբ, ոչ պակաս քան 44% բուրդ, ոչ ավել քան 54% պոլիէսթեր և ոչ ավել քան 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից: Բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայով, ունի դիմացի և հետին կոկետկաներ, լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղահայաց կենտրոնական ծալվածքներով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են 2 հատ պաշտպանական գույնի 14մմ պլաստմասե փակ կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, կողքերից Էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի է, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ, թևերը ներկարված` մուգ կանաչավուն գույնի 14մմ պլաստմասե երկուական փակ կոճակով կոճկվող մանժետներով (մանժետները` ներդիր կտորով): Ռեսորտների շրջանում 2 փակ օղակներ և 2 հատ 3.0-3.5սմ լայնքով կամրջակներ` ուսադիրների ամրացման համար: Աստառը` մետաքսյա (90գ/մ²) մուգ կանաչավուն գույնի գործվածքից: Ձախ լանջափեշին ներսամասից երեսացու կտորով մշակվում է ծոցագրպան, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Ձախ թևքի վրա մշակվում է սեպածև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ ԱԱԾ խորհրդանշանը` դրոշը համապատասխան գունավորմամբ: Կրծքամասի ձախ գրպանի կափույրից վերև` գրպանների լայնությանը</p>

համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսի կրծքանշան՝ ՀՀ ԱԱԾ գրվածքով: Լրակազմում ներառված, բայց համագգեստի վրա չկարված, ասեղնագործ 1 հատ թևքանշանի և 1 հատ գրվածքի տեսակները կտրամադրվի պատվիրատույի կողմից չափս հասակային տվյալների տրամադրմանը զուգահեռ: Տաբատը կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից է: Աջ հետնամասում կտրված գրպան՝ ձևավոր կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-2.0 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կապույտ կամ կանաչ գույնի մահուղից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա մուգ կանաչավուն գույնի գործվածքից աստառ: Պիտակավորումը: Բաճկոնի ծոցագրպանին և տաբատիգոտու ներսի մասին պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա պետք է կախված լինի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԳԾ-ՏՆՏԿ-ԲԱՃԱՊՁԲ-24/1-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	